

ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	3
ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....	5
Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ.....	5
Հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը.....	9
ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՌԻՍԿԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ.....	13
ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ.....	21
ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՔԱՅԼԵՐ (ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ).....	24
Օրենսդրական փոփոխություններ.....	24
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունների զարգացում.....	28

ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ

Ապօրինի հարստացման երևույթի սահմանումը տրված է «ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիա»-ի «ՔՐԵԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ» 3-րդ գլխի Հոդված 20-ում, որտեղ «Ապօրինի հարստանալը» երևույթի քրեականացման պահանջը դիտվում է, որպես «Իր (երկրի) սահմանադրությունը և իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքները պահպանելու պայմանով՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է քննարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ որպես քրեական իրավախախտում ճանաչվի անօրինական հարստացման արարքը, երբ դա կատարվում է դիտավորությամբ, այսինքն՝ պաշտոնատար անձի ակտիվների նշանակալից ավելացումը, որը գերազանցում է նրա օրինական եկամուտները, և որը նա չի կարող խելամտորեն հիմնավորել:» Սույն կոնվենցիան Հայաստանը վավերացրել է 2006թ. հոկտեմբերի 23-ի ԱԺ Ն-303-3 որոշմամբ: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թ. ապրիլի 7-ին:

«Ապօրինի հարստանալը» երևույթը քրեականացվել է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենսգրքի 310.1 հոդվածով, որը ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 2016թ. դեկտեմբերի 16-ին: Նշված հոդվածով «1. Ապօրինի հարստանալը՝ սահմանվում է որպես «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, և եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ:

2. Սույն հոդվածում էական է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը):» Օրենքը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հուլիսի 1-ից:

Այսպիսով, ինչպես նկատելի է ՀՀ քրեական օրենսգրքում «ապօրինի հարստանալը» երևույթը (հանցանքը) պայմանավորված է մի շարք կարևորագույն հանգամանքների կամ պայմանների ի հայտ գալով: Դրանցից են.

1. հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ հանդիսանալը,
2. հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը,
3. գույքի ավելացումը (կամ պարտավորությունների նվազումը) էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով,

4. ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են,
5. էական է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը)::

Վերը թվարկված պայմանները կարիք ունեն պարզաբանման և դրանց օրենսդրական կարգավորումների ներկայացման:

Ստորև կքննարկվի ապօրինի հարստացման երևույթի ի հայտ գալու պայմանների նկարագրությունը և օրենսդրական կարգավորվածության հանգամանքները:

Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով¹ հայտարարատու պաշտոնատար անձինք են (հոդված 34) պետական պաշտոն զբաղեցնող անձինք, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք, քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնող անձինք, արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը, զինվորական ծառայության բարձրագույն պաշտոն զբաղեցնող անձինք, ոստիկանության, հարկային, մաքսային, քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք:

Պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական:

Քաղաքական պաշտոնը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված ընտրովի կամ նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող անձն օժտված է քաղաքական որոշումներ կայացնելու իրավասությամբ և քաղաքական պատասխանատվություն է կրում այդ որոշումների համար:

Պետական քաղաքական պաշտոններն են Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների, վարչապետի, փոխվարչապետների, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, նախարարների և նրանց տեղակալների պաշտոնները:

Համայնքային քաղաքական պաշտոններն են համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների, համայնքի ավագանու անդամի պաշտոնները:

Վարչական պաշտոնը հանրային իշխանության մարմիններում նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող պաշտոնատար անձն ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով տվյալ մարմինն վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումը և պատասխանատվություն է կրում իր պաշտոնից բխող նպատակների և խնդիրների իրականացման համար:

Պետական վարչական պաշտոններն են Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, վարչապետի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների, պետական պահպանության ծառայության պետի և

¹ Ապօրինի հարստացման երևույթի օրենսդրական կարգավորումների ներկայացման ժամանակ հիմք է ընդունվել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2018թ. մարտի 23-ի թիվ ՀՕ-206-Ն օրենքի հայտարարագրման համակարգին վերաբերելի դրույթները, որոնք ուժի մեջ են մտնելու 2020թ. հունվարի 1-ից՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով համապատասխան հանձնաժողովի ձևավորման պահից:

նրա տեղակալների, վարչապետի աշխատակազմի գրասենյակի ղեկավարի, մարզպետների և նրանց տեղակալների, դատական դեպարտամենտի ղեկավարի, Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի, գլխավոր ռազմական տեսուչի և նրա տեղակալի պաշտոնները:

Համայնքային վարչական պաշտոններն են Երևանի, Գյումրու և Վանաձորի գլխավոր ճարտարապետների, Երևանի վարչական շրջանի ղեկավարի և նրա տեղակալի, բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնները:

Ինքնավար պաշտոնը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և (կամ) օրենքով սահմանված որոշակի ժամանակահատվածով նշանակովի կամ ընտրովի պաշտոն է, որն զբաղեցնող պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում կոլեգիալ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև անհատական հիմունքներով անկախության սկզբունքի հիման վրա ընդունում է որոշումներ, օրենքով նախատեսված դեպքերում համակարգում դրանց կատարումը, ինչպես նաև պատասխանատվություն է կրում իր պաշտոնից բխող նպատակների և խնդիրների իրականացման համար:

Ինքնավար պաշտոններն են Մարդու իրավունքների պաշտպանի, Սահմանադրական դատարանի դատավորների, անկախ պետական մարմինների անդամների, ինքնավար մարմինների անդամների, Վիճակագրական պետական խորհրդի անդամների, Վճռաբեկ, վերաքննիչ և առաջին ատյանի դատարանների դատավորների, գլխավոր դատախազի և դատախազների, քննչական մարմինների ղեկավարների և ղեկավարների տեղակալների, քննիչների, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարի պաշտոնները:

Հայեցողական պաշտոնը նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող անձն իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում կատարում է իր անմիջական ղեկավարի հանձնարարականները և պատասխանատվություն է կրում այդ հանձնարարականների կատարման համար:

Պետական հայեցողական պաշտոններ են Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, փոխվարչապետների խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի և ռեֆերենտի պաշտոնները, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչների պաշտոնները, Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդականի և օգնականի պաշտոնները, Սահմանադրական դատարանի մամուլի քարտուղարի, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի պաշտոնները, վարչապետի գլխավոր խորհրդականի պաշտոնը, հատուկ հանձնարարություններով դեսպանի պաշտոնը, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի պաշտոնը, նախարարների, Ազգային ժողովի նախագահի տեղակալների, գլխավոր դատախազի, Կառավարությանը, վարչապետին ենթակա պետական մարմինների ղեկավարների, անկախ պետական մարմնի, ինքնավար պետական մարմնի նախագահների,

մարզպետի խորհրդականի, օգնականի պաշտոնները, գլխավոր դատախազի, նախարարի մամուլի քարտուղարի պաշտոնները, նախարարությանը ենթակա պետական մարմնի, տեսչական մարմնի ղեկավարի օգնականի պաշտոնները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի մամուլի քարտուղարի, Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի, վարչապետի աշխատակազմի ղեկավարի, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնականի, Ազգային ժողովի խմբակցության փորձագետի, Ազգային ժողովի պատգամավորի վճարովի հիմունքներով օգնականի պաշտոնները, վարչապետի ռեֆերենտների խմբի ղեկավարի պաշտոնը, վարչապետի արարողակարգի պատասխանատուի, փոխվարչապետի արարողակարգի պատասխանատուի պաշտոնները, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ղեկավարամենտի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգողի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մարզային ստորաբաժանման ղեկավարի, Մարդու իրավունքների պաշտպանի խորհրդականի, օգնականի և մամուլի քարտուղարի պաշտոնները, գլխավոր դատախազի տեղակալի, նախարարի տեղակալի, Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա պետական մարմինների ղեկավարների տեղակալների, անկախ պետական մարմնի նախագահի տեղակալի, ինքնավար մարմնի նախագահի տեղակալի, մարզպետի տեղակալի օգնականի պաշտոնները և անկախ պետական մարմնի, ինքնավար մարմնի անդամի օգնականի պաշտոնները:

Համայնքային հայեցողական պաշտոններն են համայնքի ղեկավարի խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի, համայնքների ղեկավարի տեղակալի օգնականի, Երևանի, Գյումրու և Վանաձորի գլխավոր ճարտարապետների օգնականի համայնքների ավագանու խմբակցությունների փորձագետների պաշտոնները:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով (հոդված 34, 5-րդ մաս) հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց թվին են պատկանում հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամները: Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք) են նրա ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ: Սույն օրենքի իմաստով՝ համատեղ բնակվող է համարվում պաշտոնն ստանձնելու կամ դադարեցնելու օրվան նախորդող կամ հայտարարագրման տարվա ընթացքում 183 և ավելի օր հայտարարատուի հետ բնակվող անձը: Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամները հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան

հայտարարագրերում ներկայացնում են իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ:

Հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը

Հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրեր:

Հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը ներկայացվում են պաշտոնական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ: Տարեկան հայտարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար (հոդված 34) :

Հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով²: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մարտի 31-ը (հոդված 36):

Այսպիսով, ապօրինի հարստացման երևույթի ռիսկերի բացահայտման գործում որպես «հաշվետու ժամանակահատված» կարող է դիտարկվել հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնի ստանձնման և պաշտոնի դադարեցման ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր տարվա կտրվածքով:

Գույքի ավելացումը և/կամ պարտավորությունների նվազումը ուղղակիորեն պայմանավորված է հայտարարագրի բովանդակության հետ: Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքում հայտարարագրման ենթակա է գույքը, եկամուտները և շահերը: Ապօրինի հարստացման տեսանկյունից կարևորվում են գույքի և եկամուտների բովանդակությունը:

Գույքի հայտարարագրի բովանդակությունը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝

- 1) անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկիին, շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույքը.
- 2) տրանսպորտի միջոցը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, անիվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենան կամ մեխանիզմը, օդային, ջրային փոխադրամիջոցը: Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների շարքին են դասվում այն տրանսպորտային միջոցները, որոնց շարժիչների աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սմ-ը, իսկ առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժ-ը, ինչպես նաև տարբեր բեռնատարողությամբ կցորդները կամ կիսակցորդները.
- 3) արժեթուղթը (պարտատոմսը, չեկը, մուրհակը, բաժնետոմսը և Հայաստանի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթը, բացառությամբ բանկային վկայագրի) և (կամ) այլ ներդրումը հավաստող փաստաթուղթը (բաժնեմասը, փայաբաժինը).
- 4) հանձնված, վերադարձված փոխառությունը (այդ թվում՝ բանկային ավանդը).

² Մինչ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին ՀՀ օրենքով հանձնաժողովի ձևավորումը, հայտարարագրերը ներկայացվում են բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով

5) սույն մասի 1-4-րդ կետերում չնշված՝ ութ միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույք (այսուհետ՝ թանկարժեք գույք)։

6) դրամական միջոցները (այդ թվում՝ բանկում ունեցած)։

2. Սույն հոդվածում նշված հայտարարագրման ենթակա գույքի գինը (արժեքը) կամ արտարժույթով եկամուտը որոշելիս արտարժույթի համարժեքը հաշվարկվում է՝ ելնելով գործարքի օրվա համար Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից, իսկ բնամթերքով իրականացրած գործարքի գինը (արժեքը)՝ ելնելով բնամթերային (ոչ դրամական) եկամուտը կամ գույքը հայտարարագրում արտացոլելու կարգով որոշվող գնից (արժեքից)։

3. Գույքը հայտարարագրելիս նշվում են՝

1) անշարժ գույքի դեպքում՝ անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, գույքի հաշվառման համարը, սեփականության տեսակը (անձնական կամ ընդհանուր), ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ հայտարարատու համասեփականատիրոջ բաժինը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակը։

2) տրանսպորտի միջոցի դեպքում՝ տրանսպորտի տեսակը, մակնիշը, սերիան, թողարկման տարին, նույնականացման համարը, ձեռք բերելու տարին և եղանակը։

3) արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում՝ արժեթղթի և (կամ) այլ ներդրման տեսակը, գինը (արժեքը), ձեռք բերելու տարին։

4) հանձնված, վերադարձված փոխառության (այդ թվում՝ բանկային ավանդի) դեպքում՝ պարտապանի անվանումը կամ ազգանունը, անունը, հայրանունը, հասցեն, փոխառության գումարը (չափը), փոխառության արժույթը։

5) թանկարժեք գույքի դեպքում՝ գույքի անվանումը, նկարագրությունը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակը։

6) դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, արժույթը։

4. Տարեկան հայտարարագրում ներառվում են նաև տվյալ տարվա (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) ընթացքում հայտարարագրման ենթակա անշարժ գույք, տրանսպորտի միջոց, թանկարժեք գույք ձեռք բերելու կամ օտարելու գործարքները՝ նշելով գույքի տեսակը, ձեռք բերելու կամ օտարելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն։

5. Արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեթուղթը և (կամ) այլ ներդրումը՝ նշելով արժեթղթի տեսակը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն։

6. Փոխառության դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ հանձնված կամ վերադարձված փոխառության գումարը (չափը) և արժույթը, պարտապանի անվանումը կամ ազգանունը, անունը, հայրանունը, հասցեն։

7. Դրամական միջոցի դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցի չափը և արժույթը։

Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը ներառում է սույն հոդվածով սահմանված եկամուտները և դրանց ստացման աղբյուրները:

2. Հայտարարատուի եկամուտների ստացման աղբյուր է այն անձը, որը հայտարարատուին վճարել է սույն հոդվածով սահմանված եկամուտ:

3. Եկամուտները հայտարարագրվում են առանց հարկերի և (կամ) պարտադիր այլ վճարների:

4. Սույն օրենքի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ եկամուտները.

1) աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները.

2) գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներ օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումը (ռոյալթի) և հեղինակային վարձատրությունը.

3) ստացված փոխառությունները (վարկերը).

4) տրված փոխառությունների դիմաց ստացված տոկոսը և այլ հատուցումը.

5) շահաբաժինները.

6) խաղատներում կամ շահումներով խաղերում ստացված եկամուտները (շահումները).

7) մրցույթների կամ մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային կամ դրամական շահումները (մրցանակները).

8) նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը, դրամական միջոցները (բացառությամբ աշխատանքի, ծառայության տեսքով ստացված).

9) ժառանգության կարգով ստացված գույքը (նաև դրամական միջոցները).

10) ապահովագրական հատուցումները.

11) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը.

12) գույքը (նաև հայտարարագրման ոչ ենթակա) օտարելուց ստացված եկամուտը.

13) վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցում.

14) միանվագ վճարները.

15) գույքային իրավունքներից ստացված եկամուտը.

16) քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտը.

17) կենսաթոշակը.

18) գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտը:

5. Հայտարարագրման ենթակա են նաև սույն հոդվածի 4-րդ մասով չսահմանված այլ եկամուտները՝ նշելով դրանց տեսակները և ստացման աղբյուրները:

6. Եկամուտը հայտարարագրելիս նշվում են՝

1) եկամտի տեսակը.

2) եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն.

3) եկամտի չափը (գումարը).

4) եկամտի արժույթը:

7. Հայտարարագրման ենթակա չէ հաշվետու ժամանակահատվածում ստացված այն եկամուտը կամ դրանց հանրագումարը, որը չի գերազանցում 200 000 Հայաստանի Հանրապետության դրամը:

8. Պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրն ստացված եկամուտները:

9. Ստացված եկամուտը սույն օրենքի իմաստով չի համարվում օրինական, եթե միանվագ ստացվող կամ տրվող գումարը գերազանցում է երկու միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, սակայն հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը դրամական միջոցներով փոխառություն հանձնելը կամ ստանալը, հանձնած կամ ստացած դրամական միջոցներով փոխառության դիմաց վճարներ (տոկոսներ կամ այլ հատուցում) հանձնելը կամ ստանալը, դրամական միջոցներ նվիրատվություն ստանալը, դրամական միջոցներով արտահայտված շահաբաժիններ ստանալը, ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտ ստանալը, գույքը օտարելուց եկամուտ ստանալը, վարձակալության դիմաց վճար կամ այլ հատուցում ստանալը, քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից եկամուտ ստանալը, վճարներ ստանալը, գույքային իրավունքներից եկամուտ ստանալը կատարել է կանխիկ ձևով:

Ստացված փոխառությունները (վարկերը) չնայած ներառված են եկամուտները բաժնում, իրենց բովանդակությամբ դրանք այն պարտավորություններն են, որոնք հայտարարագրման պարտականություն ունեցող անձը ստանձնել է այս կամ այն բանկի կամ այլ երրորդ անձի (իրավաբանական կամ ֆիզիկական) նկատմամբ պաշտոնի ստանձնման/դադարեցման տարվա հունվարի մեկից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրը ընկած ժամանակահատվածում, իսկ տարեկան հայտարարագրի դեպքում՝ տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՌԻՍԿԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

Ապօրինի հարստացման երևույթի ռիսկերի վերհանման հիմնական գործընթացը սկսվում է հայտարարագրի վերլուծությունից: Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքը (2011թ. հունիսի 14-ի ՀՕ-172) Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին վերապահել է հայտարարագրերի վերլուծության գործընթացի կանոնակարգման (հոդված 43) գործառույթ: Նույն օրենքի 43.1 հոդվածով սահմանված են հայտարարագրի լրացման և ներկայացման պահանջների պահպանման և հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգման եղանակները:

Հայտարարագրերի վերլուծության իրականացման գործընթացը առավել ամբողջական ամփոփված է կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին ՀՀ օրենքի 5-րդ գլխի «**Հայտարարագրերի ստուգումը և վերլուծությունը**» հոդվածում, որտեղ հայտարարագրերի ստուգման գործընթացը համալրված է հայտարարագրված տվյալների մաթեմատիկական և ռիսկային ցուցանիշների հիման վրա վերլուծության մեթոդներով:

Վերոնշյալ երկու օրենքների հայտարարագրերի վերլուծությանը վերաբերելի դրույթների համադրումը ցույց է տալիս, որ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը հայտարարագրերի վերլուծության չորս հիմնական եղանակներից ըստ էության իրավասու է իրականացնելու միայն հայտարարագրերի ստուգման կամ դրանցում պարունակող տվյալների արժանահավատության ստուգման գործընթացը, իսկ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը օժտված է լինելու իրականացնել թե հայտարարագրերի վերլուծության և թե դրանց արժանահավատության ու ամբողջականության ստուգման բոլոր հիմնական գործընթացները:

Այսպիսով, հայտարարագրերի ստուգումն ու վերլուծությունը իրականացվում է.

- 1) հայտարարագրի լրացնելու և ներկայացնելու պահանջների պահպանման ստուգման.
- 2) հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգման.
- 3) հայտարարագրված տվյալների մաթեմատիկական վերլուծության.
- 4) ռիսկային ցուցանիշների հիման վրա հայտարարագրերի վերլուծության մեթոդներով կամ եղանակներով:

Նախքան հայտարարագրերի վերլուծություն իրականացնելը դրանք պարտադիր պետք է անցնեն ստուգման գործընթացը, որն ըստ էության պետք է ապահովի հայտարարագրերում արձանագրված տվյալների ամբողջականությունը և հավաստիությունը կամ արժանահավատությունը: Այս երկու ստուգումների իրականացման համար օգտագործվում են հետևյալ գործիքները:

Առաջին, հայտարարագիրը լրացնելու և ներկայացնելու պահանջների պահպանման ստուգման ժամանակ հայտարարագրի տվյալները համադրվում են «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց, ինչպես նաև հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի էլեկտրոնային եղանակով լրացման և ներկայացման (հանձնման) ուղեցույց»-ի պահանջներին: Արդյունքում դուրս են բերվում բոլոր այն տվյալները կամ գրառումները, որոնք իրականացված չեն ուղեցույցի պահանջներին համապատասխան և վարույթի շրջանակում ենթակա են ուղղման:

Երկրորդ, հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգման ժամանակ հայտարարագրում ներառված տվյալներն ու գործարքները համադրվում են իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, Կենտրոնական դեպոզիտարիայից և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանցից, վարկային բյուրոների կողմից վարվող շտեմարաններում (այդ թվում՝ էլեկտրոնային) արձանագրված տվյալների հետ:

Ներկա դրությամբ, բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի էլեկտրոնային հայտարարագրման համակարգը միացված է.

- Իրավաբանական **անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային բազային:** Հանձնաժողովի էլեկտրոնային առցանց հասանելիությունը կառուցված է որպես օգտվող, որը նշանակում է, որ սեփական գաղտնաբառով և օգտվողի անվամբ տիրապետում է բազայում առկա բոլոր տվյալներին:
- **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային համակարգին:** Հանձնաժողովը առցանց ստանում է հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց՝ (ամուսին, դուստր, որդի, ծնող) ազգակցական կապերի վերաբերյալ տվյալները:
- **Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի էլեկտրոնային շտեմարանին:** Հանձնաժողովը ստանում է հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի մեջ մտնող ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի վերաբերյալ տվյալները:
- **ՀՀ ոստիկանության տրանսպորտային միջոցների էլեկտրոնային հաշվառման համակարգին:** Հանձնաժողովը ստանում է հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի մեջ մտնող ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տվյալները:
- **ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեգիստրին:** Հանձնաժողովը ստանում է ՀՀ քաղաքացիների ռեգիստրում գրանցված ՀՀ քաղաքացիների և ՀՀ-ում կարգավիճակ ստացած օտարերկրացիների անձնագրային տվյալների վերաբերյալ տեղեկատվություն:
- **ՀՀ ՊԵԿ-ի «Հարկատու և եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին տեղեկատվական բազաներին:** Հանձնաժողովը ստանում է հայտարարագրման պարտականություն ունեցող անձանց Եկամտի տեսակների ու մեծության վերաբերյալ տվյալներ:

- Պետական մարմինների բոլոր բազաներից հարցումը կատարվում է հայտարարատու պաշտոնատար անձի և ընտանիքի կազմի մեջ մտնող անդամի ՀՕՀ-ով կամ Ա.Ա.Հ և Ծննդյան օր, ամիս տարի տվյալներով:
- **Հայաստանի Հանրապետության « Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստր»**-ից Հանձնաժողովը պատրաստվում է առցանց եղանակով ստանալ արժեթղթերի տեսակների և դրանցով կատարված գործարքների վերաբերյալ տվյալներ:
- **Վարկային բյուրոների կողմից** Հանձնաժողովը պատրաստվում է ստանալ որոշակի ամսաթվի դրությամբ և նշված ժամանակահատվածում ֆիզիկական անձի վարկային պատմության վերաբերյալ տվյալներ:
- Համանման աշխատանքներ են իրականացվում նաև ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության «Էլ-կենսաթոշակ և ընտանիքների անապահովության գնահատման տեղեկատվական համակարգերի տվյալների շտեմարաններից » տվյալների առցանց եղանակով ստացման ուղղությամբ:

Երրորդ, միայն հայտարարագրերի ներկայացման և դրանցում տվյալների արժանահավատության և ստուգման գործընթացի ավարտի արդյունքում է անցում կատարվում հայտարարագրերի մաթեմատիկական և ռիսկային ցուցանիշների (չափորոշիչների) հիման վրա վերլուծության մեթոդներին կամ եղանակներին: Հայտարարագրերի վերլուծության յուրաքանչյուր փուլում կամ դեպքում Հանձնաժողովը (Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի, իսկ հետագայում կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողով) ընդունում է որոշում՝ վերլուծության ենթակա հայտարարագրերի ընտրանքի մեթոդների վերաբերյալ:

Ըստ ռիսկային չափորոշիչների, բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի էլեկտրոնային համակարգը դուրս է բերում ռիսկային հայտարարագրերի ցանկը: Հայտարարագրված «եկամուտների և գույքի ձեռքբերումների զրո կամ բացասական տարբերությամբ» չափորոշիչով ռիսկային հայտարարագրերի մաթեմատիկական և տրամաբանական վերլուծությունն իրականացվում է 3 առումներով՝

- հայտարարագրման ենթակա գույքի տեսակների ընդամենը մուտքերի (եկամուտներ և օտարումներ) և ծախսերի (ձեռքբերումներ) մասով,
- հայտարարագրված եկամուտների մեծության մասով,
- հայտարարագրման ենթակա գույքի տեսակների ձեռքբերումների (ծախսերի) մասով:

1. **Ընդամենը մուտքերի և ծախսերի** (հայտարարագրման ենթակա գույքի տեսակների մասով) համադրման տեսանկյունից, հայտարարագրված եկամուտների մեծության կամ «Ստացված եկամուտներ ընդամենը» տողի ներքո ընդգրկվում են «Հանրային ծառայության

մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով սահմանված հայտարարագրման ենթակա եկամտի բոլոր տեսակները:

Ընդամենը եկամուտներին են դասվում նաև դրամական միջոցների ունեցած խնայողությունները, որոնք իրենցից ներկայացնում են տարվա սկզբի և վերջի դրությամբ հայտարարագրված դրամական միջոցների հաշվեկշիռը (դրական կամ բացասական մեծությամբ):

Հայտարարագրման ենթակա գույքի տեսակների ձեռքբերումների (ծախսերի) մասով ընդգրկվում են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածով սահմանված հայտարարագրման ենթակա գույքի բոլոր տեսակների ձեռքբերումների մասով հայտարարագրված գործարքների մեծությունները:

- Վերլուծություն իրականացնողը համադրում է տարեկան հայտարարագրի «ընդամենը եկամուտները» տողի մեծությունը (ներառյալ՝ դրամական միջոցների տարեսկզբի և տարեվերջի հաշվեկշռային մնացորդը) հայտարարագրված գույքի բոլոր տեսակների ձեռքբերումների (ծախսերի) հանրագումարի հետ: Եթե հաշվարկի արդյունքում եկամուտները փոքր են կամ հավասար գույքի ձեռքբերումների արժեքին, ապա վերլուծողը փաստաթղթավորում է այդ անհամապատասխանությունը «ապօրինի հարստացում» աղյուսակում: Այդ հայտարարագրերը ենթակա են մանրամասն վերլուծության ռիսկային հայտանիշներից յուրաքանչյուրի մասով:
 - Եթե «ընդամենը եկամուտները» հավասար կամ մեծ են գույքի (անշարժ, շարժական, արժեթղթեր, փոխառություններ, թանկարժեք գույք) ձեռքբերումների արժեքին, սակայն փոքր են ընտանիքի մեկ շնչի հաշվով «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի կամ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից տվյալ տարվա համար հայտարարված բնակչության մեկ շնչին ընկնող միջին եկամտի շեմի կամ «ընթացիկ ծախսերի նվազագույն մեծությունից», ապա վերլուծողը այդ հայտարարագրերը որակավորում է «կասկածելի ապրելակերպ»:
2. **«Հայտարարագրված եկամուտների մեծության»** մասով վերլուծողը ստուգում է ռիսկային հայտարարագրի եկամուտներ բաժնի եկամտի տեսակների արժանահավատությունը՝ ըստ եկամտի առանձին տեսակների, օգտվելով Հանձնաժողովի և ՀՀ ՊԵԿ Հարկատու և եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին տեղեկատվական բազաներից, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ընտանիքների անապահովության գնահատման տեղեկատվական համակարգերի տվյալների շտեմարանի, Էլ.-կենսաթոշակ, վարկային բյուրոյի տեղեկատվական համակարգերի տվյալների հետ:
- Նկատված անհամապատասխանությունները գրանցվում են առանձին տեղեկանքում և եթե էլեկտրոնային բազայում արձանագրված եկամուտների մեծությունները փոքր են հայտարարագրված եկամուտների մեծություններից, ապա վերլուծողը դա որակում է որպես կեղծ տվյալներ, որը հանգեցրել է «ապօրինի

հարստացման» առերևույթ անհամապատասխանության առաջացմանը: Դրա հետ մեկտեղ, եկամուտների, մասնավորապես, գյուղատնտեսական գործունեության, ինչպես նաև դրամական միջոցների, վերադարձված փոխառությունների, ստացված նվիրատվությունների մասով հայտարարատուից պահանջում է եկամուտները հիմնավորող փաստաթղթեր: Եթե ստացված տվյալների հիման վրա վերլուծողը համոզվում է ներկայացված տվյալների հավաստիության հարցում, ապա առաջարկություններ է նախապատրաստում ոչ դիտավորյալ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացվելու մասով վարչական վարույթ հարուցելու մասին:

- Եթե ներկայացված նյութերը կամ ստացված տվյալները հիմնավորում են նկարագրված ռիսկի առկայությունը, կամ Հանձնաժողովի կողմից պահանջված տվյալները բացակայում են կամ հայտարարատուն հրաժարվում է ներկայացնել պահանջվող տվյալները՝ վերլուծողը ճշգրտված տվյալների հիմա վրա և կասկածելի եկամուտների մասով արձանագրում է «ապօրինի հարստացման» կասկածելի դեպք և առաջարկություններ է նախապատրաստում Հանձնաժողովին տվյալ դեպքի վերաբերյալ վարույթ հարուցելու շրջանակներում գործին վերաբերող բոլոր նյութերը ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկելու վերաբերյալ:

3. «Հայտարարագրման ենթակա գույքի տեսակների ձեռքբերումների (ծախսերի)» մասով

3.1 անշարժ գույքի ձեռքբերումների և օտարումների մասով գրանցված գործարքների արժանահավատությունը ստուգվում է ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի էլեկտրոնային համակարգում և հավաստիացվում է, որ կատարված գործարքները համապատասխանում են պետական գրանցամատյանի տվյալներին: Միաժամանակ,

- անշարժ գույքի ձեռքբերման և օտարման գործարքների գնի մեծությունը համադրվում է տվյալ տարվա ընթացքում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տվյալ տեսակի անշարժ գույքի գործարքի հրապարակված անշարժ գույքի գործարքների միջին գնի հետ: Անշարժ գույքի ակնհայտ բարձր գնով օտարման և ակնհայտ ցածր գնով ձեռքբերման դեպքերը որակվում են ռիսկային:
- Անշարժ գույքի ձեռքբերման առուվաճառքի եղանակի դեպքում համադրվում է ձեռքբերման գինը դրամական միջոցների նվազեցված խնայողությունների և ստացված եկամուտների հանրագումարի հետ: Եթե հաշվարկի արդյունքում արձանագրված եկամուտները փոքր են կամ հավասար անշարժ գույքի ձեռքբերումների արժեքին, ապա այս անհամապատասխանությունը որակավորվում է, որպես «չպարզաբանված եկամուտ»:

3.2 Շարժական գույքի ձեռքբերումների և օտարումների մասով գրանցված գործարքների արժանահավատությունը ստուգվում է ՀՀ ոստիկանության տրանսպորտային միջոցների էլեկտրոնային հաշվառման համակարգում: Միաժամանակ,

- շարժական գույքի ձեռքբերման և օտարման գործարքների գնի մեծությունը համադրվում է ՀՀ ոստիկանության տրանսպորտային միջոցների էլեկտրոնային հաշվառման

համակարգում գրանցված գործարքի պայմանագրային գնի հետ, ինչպես նաև տվյալ տարվա ընթացքում շարժական գույքի գործարքների միջին գնի հետ, եթե առկա է շարժական գույքի ակնհայտ բարձր գնով օտարման և ակնհայտ ցածր գնով ձեռքբերման դեպքեր, ապա դրանք որակվում են ռիսկային:

- Շարժական գույքի ձեռքբերման գնման եղանակի դեպքում համադրվում է ձեռքբերման գինը դրամական միջոցների նվազեցված խնայողությունների և ստացված եկամուտների հանրագումարի հետ: Եթե հաշվարկի արդյունքում արձանագրված եկամուտները փոքր են կամ հավասար շարժական գույքի ձեռքբերումների արժեքին, ապա այս անհամապատասխանությունը որակավորվում է «չպարզաբանված եկամուտ»:

3.3 «արժեթղթերի և այլ ներդրումների ձեռքբերումների և օտարումների մասով» գրանցված գործարքների արժանահավատությունը ստուգվում է Հայաստանի Հանրապետության «Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստր»-ի էլեկտրոնային համակարգում: Միաժամանակ,

- արժեթղթերի և այլ ներդրումների գնման եղանակով ձեռքբերման գործարքների գինը համադրվում է Հայաստանի Հանրապետության « Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստր»-ի էլեկտրոնային համակարգի տվյալներին: Դրանց անհամապատասխանության դեպքում հիմք է ընդունվում դեպոզիտարիայի տվյալները: Վերջինս համադրվում է հայտարարատուի դրամական միջոցների նվազեցված խնայողությունների և ստացված եկամուտների հանրագումարի հետ: Եթե հաշվարկի արդյունքում արձանագրված եկամուտները փոքր են կամ հավասար արժեթղթերի և այլ ներդրումների ձեռքբերումների արժեքին, ապա այս անհամապատասխանությունը որակավորվում է «չպարզաբանված եկամուտ»:
- համադրվում է արժեթղթերի և այլ ներդրումների «ձեռքբերման և օտարման գործարքների» և «հարկային տարվա սկզբի և վերջի դրությամբ» արժեթղթերի և ներդրումների արժեքի արձանագրված մեծությունները: Եթե արժեթղթերի և այլ ներդրումների հարկային տարվա սկզբի և վերջի դրությամբ արժեքների տարբերությունը չի համապատասխանում օտարված և ձեռքբերված արժեթղթերի և ներդրումների արժեքների տարբերությանը, ապա այս գործարքները նույնպես որակավորվում են որպես «չպարզաբանված եկամուտ»:
- համադրվում է հարկային տարվա հայտարարագրերում արձանագրած արժեթղթերի և այլ ներդրումների ձեռքբերումների գործարքի արժեքը նույն տարում տվյալ իրավաբանական անձի կողմից ստացված շահաբաժինների հետ: Եթե արժեթղթի ձեռքբերման գինը, (օրինակ, գնահատված է մինչև 50 հազ. ՀՀ դրամ,) իսկ ստացված շահաբաժինները կազմակերպությունից կազմում են մի քանի մլն ՀՀ դրամ, ապա այս գործարքները նույնպես որակվում են ռիսկային՝ որպես «չպարզաբանված եկամուտ»:

3.4 «8 մլն ՀՀ դրամը գերազանցող թանկարժեք գույքի ձեռքբերումների և օտարումների» մասով գրանցված գործարքների արժանահավատությունը ստուգվում է

հայտարարատուից հայցելով պարզաբանում կամ գործարքը հիմնավորող նյութեր ու անկանխիկ վճարումն հավաստող փաստաթղթեր:

- 8 մլն ՀՀ դրամը գերազանցող թանկարժեք գույքի գնման եղանակով ձեռքբերման դեպքում համադրվում է ձեռքբերման գինը ներկայացված հիմնավորող փաստաթղթերի տվյալների հետ: Միաժամանակ ճշտված տվյալները համադրվում է հայտարարագրի դրամական միջոցների նվազեցված խնայողությունների և ստացված եկամուտների հանրագումարի հետ: Եթե հաշվարկի արդյունքում արձանագրված եկամուտները փոքր են կամ հավասար թանկարժեք գույքի ձեռքբերումների արժեքին, ապա այս անհամապատասխանությունը որակավորվում է «չպարզաբանված եկամուտ»:

3.5 «տրված և վերադարձված փոխառությունների մասով գրանցված գործարքներ» մասով գրանցված գործարքների արժանահավատությունը ստուգվում է հայտարարատուից հայցելով պարզաբանում կամ գործարքը հիմնավորող նյութեր ու անկանխիկ վճարումն հավաստող փաստաթղթեր:

- Համադրվում է հարկային տարում հանձնված և վերադարձված փոխառությունների գործարքների և «փոխառության գումարը հարկային տարվա սկզբի և վերջի դրությամբ» արձանագրված մեծությունները: Եթե հարկային տարում հանձնված և վերադարձված փոխառությունների արժեքների տարբերությունը չի համապատասխանում «փոխառության գումարը հարկային տարվա սկզբի և վերջի դրությամբ» տարբերությանը, ապա այս գործարքները որակվում են որպես ռիսկային՝ «չպարզաբանված եկամուտ»:
- համադրել հարկային տարվա ընթացքում տրված փոխառությունները դրամական միջոցների խնայողությունների նվազեցումների, ինչպես նաև եկամուտների ընդհանուր գումարի հետ: Դրամական միջոցների նվազեցումների կամ եկամուտների անբավարարության պայմաններում, այդ գործարքները պետք է դիտվեն ռիսկային և որակվեն որպես «չպարզաբանված եկամուտ»:
- համադրել «փոխառության գումարը հարկային տարվա սկզբի և վերջի դրությամբ» արձանագրված մեծությունների տարբերությունը, ինչպես նաև դրամական միջոցների խնայողությունների տարբերությունը հայտարարագրի «եկամուտները» բաժնում արձանագրված «տրված փոխառությունների դիմաց ստացված տոկոսը»-ը հոդվածով եկամտի մեծության հետ: Եթե եկամուտները բաժնում ընդհանրապես բացակայում է այդ տեսակ եկամուտը կամ տարվա վերջին դրությամբ արձանագրված փոխառության գումարը գերազանցում է դրամական միջոցների խնայողության և «տրված փոխառությունների դիմաց ստացված տոկոսը»-ի մեծությանը, ապա նման գործարքները նույնպես դիտարկվում են որպես ռիսկային և որակվում «չպարզաբանված եկամուտ»:

3.6 «դրամական միջոցների խնայողությունների մասով գրանցված տվյալներ կամ դրանց բացակայությունը» մասով գրանցված գործարքների արժանահավատությունը

ստուգվում է հայտարարատուից հայցելով պարզաբանում կամ գործարքը հիմնավորող նյութեր ու անկանխիկ վճարումն հավաստող փաստաթղթեր:

- Համադրվում է ըստ արժույթների տեսակների «հարկային տարվա սկզբի և հարկային տարվա վերջի դրությամբ» հայտարարագրված դրամական միջոցների տարբերությունների հանրագումարը (վերահաշվարկված ՀՀ դրամով ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տվյալ տարվա փոխանակման միջին փոխարժեքով) հայտարարագրի «եկամուտներ» բաժնի «ընդամենը ստացված եկամուտներ» հանրագումարի (վերահաշվարկված ՀՀ դրամով ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տվյալ տարվա փոխանակման միջին փոխարժեքով) մեծության հետ: Եթե այդ տարբերությունը բացասական է կամ հավասար է դրամական միջոցների խնայողության գումարի մեծությանը, ապա որպես ռիսկային գործարք այն պետք է արձանագրել և որակել «չպարզաբանված եկամուտ»:

Այսպիսով՝ եթե ամփոփենք հայտարարագրի վերլուծության վերոգրյալ մեթոդների հիման վրա ապօրինի հարստացման երևույթի ռիսկերի բացահայտման գործընթացը, ապա վերջինս կարող ենք բանաձևել հետևյալ արտահայտությամբ՝

Ապօրինի հարստացման ռիսկ = Գույքի ավելացումը (կամ պարտավորությունների նվազումը) - օրինական եկամուտները > 5 մլն. ՀՀ դրամը:

1. **Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերի բովանդակությունը լիովին միտված չէ հանրային պաշտոնյաների ու ծառայողների «ապօրինի հարստացման» երևույթի ռիսկերի բացահայտմանը:**
 - Այսպես, դեռևս շարունակվում է պահպանվել այսպես կոչված «թանկարժեք» գույքի տեսակի հայտարարագրման 8 մլն. ՀՀ դրամ բարձր շեմը, առանց կոնկրետացնելու և հստակեցնելու թե ինչպիսի շրջանակ է այն ներառում:
 - Թանկարժեք գույքի հայտարարագրման 8 մլն. ՀՀ դրամ շեմը գերազանցում է ՀՀ քրեական օրենսգրքով «ապօրինի հարստացում» հոդվածով նախատեսված հայտարարատու պաշտոնատար անձի օրինական եկամուտների և գույքի ավելացման և (կամ) նվազեցված պարտավորություններն էականորեն գերազանցող (5 մլն ՀՀ դրամ) շեմը:
 - Արդյունքում, նոր ձևավորվելիք կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի շանսերը բացահայտելու ապօրինի հարստացման երևույթի ռիսկեր՝ զգալիորեն նվազում են, եթե ոչ չեզոքացվում:
2. **Հայտարարագրի բովանդակությամբ չի նախատեսվում հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների կողմից ստանձնած պարտավորությունների (ստացված վարկեր, այլ երաշխավորություններ և այլն) հայտարարագրում:**
 - Միայն եկամուտներ բաժնում նախատեսվում է տվյալ տարվա ընթացքում ստացված պարտավորությունների հայտարարագրում, որի մնացորդը հաջորդ տարիներին հայտարարագրման ենթակա չէ:
 - Նույնը վերաբերում է մինչև պաշտոն զբաղեցնելը հայտարարատուի ունեցած պարտավորությունների (չմարված վարկերի ու երաշխավորությունների) հայտարարագրմանը, որոնք նույնպես ենթակա չեն հայտարարագրման:
 - Այս հանգամանքը ևս բացառում է «ապօրինի հարստացման» երևույթի ռիսկերի բացահայտմանը:
3. **Հայտարարագրի բովանդակությամբ չի նախատեսվում առանձին աշխատանքների, ծառայությունների համար կատարված այսպես կոչված «ընթացիկ ծախսերը», և հայտարարագրման ենթակա չէ գույքի կապիտալ, նորոգման ծախսերը**
 - Եթե նկատի ունենանք, որ հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների հայտարարագրի չի ներառում ընթացիկ ծախսերը (կոմունալ վճարներ, սնունդ, հագուստ և այլն), ինչպես նաև կապիտալ նորոգման ծախսերը, ապա միայն նշանակալի «ներդրումային» ծախսերի համար լրացուցիչ 5 մլն. դրամի էական ծախսերի շեմի սահմանումը դառնում է «ինդուլգենցիա»:
 - Հայաստանում մեկ շնչին ընկնող տարեկան Համախառն եկամուտը կազմում է մոտավորապես 2 մլն. դրամ (3800 ԱՄՆ դոլար):Մա նշանակում է, որ հայտարարատու

պաշտոնատար անձանց համար սահմանվում է լրացուցիչ «կաշառք» կամ այլ ոչ օրինական եկամուտ ստանալու հնարավորություն, որը կարող է տեղավորվել 5 մլն. դրամի սահմաններում:

4. **Նվիրատվության և օգնության կարգով ստացված գույքի հայտարարագրումը կատարվում է միայն հայտարարագրի եկամուտներ բաժնում:**
 - Հայտարարագրվում են միայն այն նվիրատվությունները, որոնք իրենցից աշխատանք և ծառայություններ չեն ներկայացնում: Մինչդեռ, աշխատանքի և ծառայությունների տեսքով նվիրատվությունները մնում են հայտարարագրումից դուրս և հիմք չեն ապօրինի հարստացման երևույթի բացահայտման համար:
 - Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը նոր պայմաններում օրենսդրական կարգավորումների բացակայության պայմաններում հնարավորություն չի ունենալու կառավարել այս գործընթացը:
5. **Հայտարարագրում բացակայում է գույքի ձեռքբերումների և/ կամ (պարտավորությունների մարման) աղբյուրների վերաբերյալ տվյալները:** Վերջինս հիմք պետք է դառնա ձեռքբերումների, պարտավորությունների մարման օրինականության ստուգման համար:
6. **Հայտարարագրում դրամական միջոցների հայտարարագրումը կատարվում է մեկ ագրեգատավորված (համախմբված) թվով,** չառանձնացնելով խնայողությունները կանխիկի տեսքով և բանկային հաշիվներում: Վերջինս հնարավորություն չի տալիս տարանջատելու դրամական միջոցների խնայողությունների աղբյուրները և կանխիկի ռիսկերը:
7. **Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերի վերլուծության միջոցով «ապօրինի հարստացման» երևույթի ռիսկերի բացահայտման (վերհանման) մեթոդալոգիայի (հաշվարկման) գործում միասնական մոտեցման բացակայությունը:**
 - Հայտարարագրերի վերլուծության 4 եղանակներն ու մեթոդները լիովին հնարավորություն չեն տալիս բացահայտելու ապօրինի հարստացման ռիսկերը: Դրանք ամբողջովին միտված են հայտարարագրում և առանձին տվյալների շտեմարաններում արձանագրված տվյալների արժանահավատության ստուգմանը և դրա հիման վրա անհամապատասխանությունների դուրս բերմանը: Մինչդեռ, հայտարարագրման պարտավորություն ունեցող անձի փաստացի կենսակերպի կամ ապրելակերպի վերաբերյալ տվյալների ստացումը (life monitoring) և դրա համադրումը հայտարարագրված տվյալների հետ մնում է խնդրահարույց
 - Բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքով ապօրինի հարստացման սահմանման «հաշվետու ժամանակահատվածում» եզրույթի կիրարկման միասնական մոտեցումը: Արդյոք պետք է դիտարկել միայն կոնկրետ հայտարարագրման ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր տարվա մասով, թե անհրաժեշտ է

կիրառել պաշտոնի ստանձնումից մինչև պաշտոնի դադարեցման ողջ ժամանակահատվածը, թե երկուսն էլ միասին

- Դրանով պայմանավորված դեռևս միանշանակ չէ թե «պաշտոնատար անձի ակտիվների նշանակալից ավելացումը» (5 մլն ՀՀ դրամ) պետք է հաշվարկվի տարեկան կտրվածքով, թե աճող հանրագումարով՝ պաշտոնավարման ողջ ժամանակահատվածի համար:

8. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի (հետազայում կոռուպցիայի կանխարգելման) Հանձնաժողովի հասանելիությունը առանձին մարմինների կողմից մշակվող տվյալներին (այդ թվում էլ էկտրոնային շտեմարաններին) սահմանափակ է

- Հասանելիությունը հայտարարագրման պարտավորություն ունեցող անձանց բանկային տվյալներին արգելված է,
- հայտարարատուի հետ փոխկապակցված (այդ թվում մերձավոր ազգակցությամբ և խնամիությամբ կապված) անձանց տվյալներին խիստ սահմանափակ է,
- բանկային գաղտնիքի և երրորդ անձանց տվյալների ստացման մասով կիրառվում են օրենսդրական արգելքներ:

9. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորման գործընթացի ձգձգումը

- ապօրինի հարստացման երևույթի ռիսկերի բացահայտման մեթոդոլոգիայի կիրառման գործում աշխատակազմի կարողությունների բացակայությունը,
- իրավապահ մարմինների հետ համագործակցության և փոխադարձ խորհրդատվությունների պրակտիկայի բացակայությունը,
- Հանձնաժողովի աշխատակազմի և քննչական ու այլ իրավապահ մարմինների աշխատակիցների «ապօրինի հարստացման» երևույթի (հանցակազմի) ու ռիսկերի բացահայտման թեմայով համատեղ վերապատրաստումների բացակայությունը

10. ՀՀ քրեական օրենսգրքով «ապօրինի հարստացում» հանցատեսակը կիրառելի է միայն հայտարարատու հանրային պաշտոնյաների ու ծառայողների ու նրանց ընտանիքի անդամների նկատմամբ՝ այն դեպքում, որ նման հանցանք կատարած այլ պաշտոնատար անձանց համար կիրառելի չէ:

Օրենսդրական փոփոխություններ

1. Վերանայել **Գույքի հայտարարագրի բովանդակությունը.**

- Գույքի և եկամուտների հայտարարագրի բոլոր բաժիններում նախատեսել գույքի ձեռքբերման և օտարման աղբյուրի վերաբերյալ տվյալների հայտարարագրման պարտավորություն
- Հայտարարագրի «թանկարժեք գույք» բաժինը ներառել «շարժական գույք» հիմնական տեսակների մեջ և նվազեցնել թանկարժեք գույքի 8 մլն. ՀՀ դրամի շեմը մինչև 2 մլն. ՀՀ դրամի: Այս նվազեցումը հիմնավորվում է այն հանգամանքով, որ Հայաստանում մեկ շնչին ընկնող համախառն եկամուտը կազմում է 3800 ամն դոլար կամ մոտ 2 մլն ՀՀ դրամից էլ պակաս, այն դեպքում, երբ հայտարարագրման շեմը սահմանված է 4 անգամ ավելի: Մյուս կողմից, 8 մլն. ՀՀ դրամի շեմը գերազանցում է ՀՀ քրեական օրենսգրքով «ապօրինի հարստացում» հանցատեսակի համար հայտարարատու պաշտոնյաների ու ծառայողների համար օրինական եկամուտների և գույքի ձեռքբերումների և կամ պարտավորությունների մարման էական համարվող 5 մլն. ՀՀ դրամի շեմը: Այսինքն, այլ հավասար պայմաններում «ապօրինի հարստացում» առերևույթ խախտման անհամապատասխանության ռիսկերի բացահայտման պայմաններում միշտ առկա է լինելու փաստարկ, որ առկա է եղել մինչև 8 մլն. ՀՀ դրամ արժողությամբ թանկարժեք գույք, որի միջոցով էլ մարվել են պարտավորությունները կամ կատարվել են ձեռքբերումները:
- Հայտարարագրի բովանդակությամբ «շարժական գույք» բաժնում նախատեսել հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների «այլ շարժական գույք կամ աշխատանքներ ու ծառայություններ» տող, որտեղ հայտարարագրի ներկայացնելու պարտավորություն ունեցող անձինք պետք է հայտարարագրեն տվյալ տարվա ընթացքում որոշակի արժեքային շեմից (օրինակ, 2 մլն ՀՀ դրամ ընդհանուր արժեքով) բարձր արժեք ունեցող առանձին ծառայությունների համար կատարված վճարումները (կրթության, առողջապահության, հանգստի և այլն), ինչպես նաև կապիտալ նորոգման վրա կատարված ծախսերը:
- Հայտարարագրի բովանդակությամբ նախատեսել հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների «ստանձնած պարտավորությունների (ստացված վարկեր, այլ գույք և այլն)» բաժին, որտեղ հայտարարագրի ներկայացնելու պարտավորություն ունեցող անձինք պետք է հայտարարագրեն իրենց ունեցած պարտավորությունների (օրինակ ստացված վարկերի) փաստացի մնացորդները, ստացման աղբյուրները՝ անկախ դրանց ստացման ժամանակահատվածից:

- Հայտարարագրի «դրամական միջոցներ» բաժնում սահմանել դրամական միջոցների բացվածքը, որտեղ պետք է ներառվեն ինչպես բանկային հաշիվներում, այնպես էլ խնայողական այլ ձևերով պահվող դրամական միջոցները, այդ թվում կանխիկ: հայտարարագրման ենթակա դրամական միջոցների նոր բովանդակությունը հնարավորություն կտա տարանջատելու դրամական միջոցների խնայողության տեսքով պահվող դրամական միջոցների աղբյուրները և կանխիկի ռիսկերը:
- Հայտարարագրում նախատեսել «նվիրատվության, ժառանգության կամ օգնության կարգով ստացված գույք» նոր բաժին, որտեղ հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող անձինք պետք է ներկայացնեն տվյալներ նվիրատվության, օգնության կամ ժառանգության կարգով ստացված կամ օտարված գույքի տեսակների (այդ թվում աշխատանքների ու ծառայությունների տեսքով), նվիրաբերված գույքի անվանումը, տեսակը, ինչ պայմաններում է նվիրատվությունը իրականացվել և նվիրատուի ազգակցական կապը, արժեքը (զինը):
- Անհրաժեշտ է անցում կատարել հայտարարագրման միասնական համակարգին: Միասնական համակարգ ասելով պետք է հասկանանք, այն, որ եթե նախկինում հայտարարատու պաշտոնատար անձը պաշտոնի ստանձնման/դադարեցման և տարեկան հայտարարագրերում հայտարարագրում էր գույքի վերաբերյալ տարբեր համախմբությամբ և շրջանակով տվյալներ, ապա նոր համակարգում թե պաշտոնի ստանձնման/դադարեցման և թե տարեկան հայտարարագրերում հայտարարագրման ենթակա են տվյալների նույն համախմբությունը և շրջանակը: Այս մոտեցումը վերաբերելի է նաև ընտանիքի բոլոր անդամներին: Եթե նախկինում ընտանիքի անդամները հայտարարագրում էին միայն տարեկան հայտարարագրեր, այն էլ ոչ լիարժեք տվյալների շրջանակով, ապա առաջարկվող փոփոխությամբ հայտարարագրումը կատարվելու է նույն տվյալների շրջանակով և համախմբությամբ: Բացի այդ, առաջարկվող մեկ միասնական հայտարարագրում ներառվելու են ընտանիքի բոլոր անդամների տվյալները և մեկ փաստաթղթի մեջ երևալու է ընտանիքի անդամների գույքի, եկամուտների, ամբողջական պատկերը՝ ինչպես հայտարարագրման պահի դրությամբ առկա գույքի, եկամուտների, այնպես էլ հայտարարագրման ժամանակահատվածի համար կատարված գործարքների փոփոխությունները:
- Անհրաժեշտ է վերանայել նաև հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակը, որը հնարավորություն կտա ամբողջական պատկերացում կազմելու գույքի չափերի, ստացման աղբյուրների, համասեփականատերերի մասին, ինչպես նաև ունենալու դրանց նույնականացման տվյալները: Վերջինս անհրաժեշտ է հայտարարագրերի վերլուծության փուլում տվյալների արժանահավատության ստուգման՝ այլ պետական մարմինների էլեկտրոնային բազաների տվյալների համադրման ժամանակ, ինչպես նաև համասեփականատերերի ունեցած շահերի

բացահայտման տեսանկյունից: Եվ վերջապես, հայտարարագրում պահանջվող տվյալները ինքնանպատակ չեն, և պայմանավորված են «ապօրինի հարստացման» երևույթի կոռուպցիոն ռիսկերի և անհամապատասխանությունների վերհանման համար՝ օգտագործելով հայտարարագրերի վերլուծության օրենքով սահմանված եղանակները: Միասնական հայտարարագրման ձևաչափով և տվյալների միևնույն համախմբմամբ, հայտարարագրերի ներկայացման պահանջը կարող է լավագույն տեղեկատվության աղբյուր ծառայել նաև իրավապահ մարմինների համար՝ առանձին կոռուպցիոն քրեական գործերով նախաքննությունների և հետաքննությունների իրականացման ժամանակ:

2. Վերանայել «Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը» մասնավորապես,

- «Հանձնված և ստացված փոխառությունները», «նվիրատվությունները, օգնություններ» ու «ժառանգության կարգով ստացված գույքը» ոչ եկամտային հոդվածները տեղափոխել հայտարարագրի «գույքի բովանդակություն» բաժին և բովանդակային առումով ներառել համապատասխան գույքի տեսակներում
- «գույքը օտարելուց ստացված եկամուտը» նույնպես տեղափոխել գույքի հայտարարագրման մաս, քանի որ գույքի օտարումից ոչ թե եկամուտ է ստացվում, այլ գույքը վերափոխվում է մեկ այլ գույքի տեսքի: Օրինակ, անշարժ գույքը դառնում է դրամական միջոցների խնայողություն: Իհարկե հնարավոր է ավելի բարձր կամ ցածր արժեքով, որը և կարձանագրվի հայտարարագրի պահանջվող տվյալների ցանկում
- հանել հայտարարագրման ոչ ենթակա 200.000 ՀՀ դրամ եկամտի շեմը: Այս փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որն ըստ էության սահմանված եկամտային շեմը չի գործելու հայտարարատու պաշտոնատար անձի համար: Այն կարող է աշխատել միայն անչափահաս զավակի, կամ խնամակալության ու հոգաբարձության տակ գտնվող ընտանիքի որոշ անդամների համար: Մինչդեռ, ընտանիքի բոլոր անդամների համար հայտարարագրման տվյալների միասնական համախմբության և շրջանակի կիրառման պայմաններում՝ նման սահմանափակումը իրատեսական չէ և ոչ մի էական ազդեցություն չի թողնելու հայտարարագրի լրացման գործընթացի դյուրացման գործում: Մյուս կողմից, ընդհանրապես հստակություն չկա, թե այդ չհայտարարագրման շեմը վերաբերելի է ստացված եկամտի կոնկրետ տեսակին, թե եկամտի բոլոր տեսակների արժեքների հանրագումարին, ընտանիքի բոլոր անդամներին թե յուրաքանչյուրին առանձին-առանձին:
- Առանձին քննարկման կարիք ունի եկամուտները բաժնի 9-րդ մասի «Ստացված եկամուտը սույն օրենքի իմաստով չի համարվում օրինական...» պայմանական արգելք - սահմանափակումը, (հաճախ անվանում են «կանխիկի սահմանափակում»), որն ըստ էության չունի համընդհանուր կիրառություն և աշխատում է միայն հայտարարատու պաշտոնատար անձի ու նրա ընտանիքի

անդամների գույքի օտարման գործարքների, ինչպես նաև վերջիններիս կողմից ստացված եկամուտների առանձին տեսակների մասով: Մինչդեռ, եթե նպատակը կանխիկի սահմանափակումն է, ապա անհասկանալի է թե ինչու գույքի ձեռքբերման գործարքների մասով նախատեսված չէ նման սահմանափակում: Որպես տարբերակ առաջարկվում է այս արգելք-սահմանափակումը տեղափոխել հանրային պաշտոնյայի «այլ սահմանափակումները» հոդված (հոդված 32), որտեղ և խմբագրել որպես առանձին սահմանափակում, ինչպես գույքի օտարման, այնպես էլ ձեռքբերումների մասով, պարտադիր պայման ճանաչելով միայն բանկային համակարգով իրականացված գործարքները: Որպես երկրորդ տարբերակ, առաջարկվում է այս սահմանափակումը դուրս բերել օրենքի կարգավորման դաշտից և հարցը կարգավորել կանխիկ գործարքների իրականացման մասին առանձին օրենքով: ՀՀ ԿԲ-ն ժամանակին նման օրենքի նախագծով հանդես է եկել, որը ԱԺ-ի կողմից, նախկին տարիներին մերժվել է: Այս նոր պայմաններում գտնում ենք, որ այդ օրենքի նախագծի ընդունման համար ստեղծված են բարենպաստ քաղաքական պայմաններ:

3. «Ապօրինի հարստացման» երևույթի ռիսկերի բացահայտման (վերհանման) մեթոդոլոգիայի մշակում, պետական ու ՏԻՄ մարմինների ու մասնավոր հատվածի կողմից մշակվող տվյալների բազաներին հասանելիության ընդլայնում

- **«Ապօրինի հարստացման» երևույթի ռիսկերի բացահայտման (վերհանման) մեթոդոլոգիայի (մեթոդիկայի) մշակում** և դրա ներդաշնակեցում քննչական մարմինների կողմից ապօրինի հարստացման երևույթ-հանցագործության բացահայտման քննչական գործողությունների ուղեցույցի հետ
- Հայտարարագրերի վերլուծության մեթոդիկայի համալրում «հայտարարագրման պարտավորություն ունեցող անձի փաստացի կենսակերպի կամ ապրելակերպի վերաբերյալ տվյալների (life monitoring)» մեթոդով և դրա միջոցով ապօրինի հարստացման ռիսկերի բացահայտում
- ՀՀ քրեական օրենսգրքով ապօրինի հարստացման հանցատեսակի «հայտարարագրման ժամանակահատված» եզրույթի հստակեցում, այն հաշվով, որ դրա ներքո հասկացվի ինչպես յուրաքանչյուր տարվա, այնպես էլ պաշտոնի ստանձնումից մինչև պաշտոնի դադարեցման ողջ ժամանակահատվածը, և/կամ երկուսն էլ միասին:
- Դրանով պայմանավորված «պաշտոնատար անձի ակտիվների նշանակալից ավելացումը» (5 մլն ՀՀ դրամ) կարող է հաշվարկվել, ինչպես տարեկան կտրվածքով, այնպես էլ աճող հանրագումարով՝ պաշտոնավարման ողջ ժամանակահատվածի համար:
- Ապահովել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հասանելիությունը հայտարարագրման պարտավորություն ունեցող անձանց բանկային տվյալներին, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության էլեկտրոնային նպաստ և կենսաթոշակ համակարգերին, բոլոր պետական

մարմինների էլեկտրոնային շտեմարաններին, լիցենզիաներին, գույքահարկի և կոմունալ վճարումների էլեկտրոնային բազաներին և այլն

4. Վերանայել ՀՀ քրեական օրենսգրքով «ապօրինի հարստացում» հանցատեսակի կիրառման շրջանակը, այն հաշվով, որ այն վերաբերելի լինի ոչ միայն հայտարարագրման պարտավորություն ունեցող հանրային պաշտոնյաներին, ծառայողներին ու նրանց ընտանիքի անդամներին, այլև ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված բոլոր պաշտոնատար անձանց համար:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունների զարգացում

- Հանձնաժողովի աշխատանքային պայմանների կահավորում, գույքով և սարքավորումներով համալրում, էլեկտրոնային համակարգի սերվերների տեղափոխում՝ հովացման, օդափոխման և անվտանգության համակարգերով ապահովում
- Հանձնաժողովի աշխատակազմի համալրում- քաղաքացիական ծառայողներ և օժանդակող անձնակազմի հավաքագրում: Պաշտոնի անձնագրերի կազմում, դրանց համաձայնեցում քաղաքացիական ծառայության գրասենյակի հետ, մրցույթների կազմակերպում
- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում, հայտարարագրման համակարգի վերանայում այն հաշվով, որ այն առավել միտված լինի ապօրինի հարստման երևույթի ռիսկերի բացահայտմանը:
- 2020թ. հունվարի մեկից հանրային ծառայության մասին ՀՀ օրենքով սահմանված հայտարարագրերի նոր բովանդակությանը համապատասխան հայտարարագրերի ընդունում, էլեկտրոնային հայտարարագրման համակարգի ծրագրային ապահովման արդիականացում, նոր ծրագրային մոդուլների ներդրում
- ապօրինի հարստացման երևույթի ռիսկերի բացահայտման մեթոդիկայի կիրառման գործում իրավապահ մարմինների և կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատակիցների համատեղ վերապատրաստման դասընթացների կազմակերպում, այդ թվում «ապօրինի հարստացման» երևույթի (հանցակազմի) ու ռիսկերի բացահայտման թեմայով,
- իրավապահ մարմինների և կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի միջև փոխադարձ համագործակցության և խորհրդատվությունների պրակտիկայի ձևավորում,